«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏ

N 09/021.558

«27» 03 2015թ.

Հարգելի Մասնակից

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N 1356-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 18-ի N 441-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 206-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 105-Ն որոշման 9-րդ կետի համաձայն մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելը՝ ս.թ. ապրիլի 1-ը, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցները պետք է վերակնքեն այդ համաձայնագրերը՝ դրանք համապատասխանեցնելով նույն որոշման պահանջներին, իսկ նշված ժամկետում դրանք չվերակնքած մասնակիցների հետ կնքված շրջանակային համաձայնագրերը լուծվում են:

Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքված շրջանակային համաձայնագրերը վերակնքելու նպատակով ներկայացնել նոր հայտ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 105-Ն որոշման համաձայն:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում աշխատանքային օրեր են հայտարարվել սույն թվականի

մարտի 28-ը ժամը 09:00-ից 18:00-ն (13:00-ից 14:00-ն ընդմիջում)
մարտի 29-ը ժամը 09:00-ից 18:00-ն (13:00-ից 14:00-ն ընդմիջում)

Սույն թվականի մարտի 30-ի և մարտի 31-ի աշխատանքային օրերը երկարաձգվել են մինչև ժամը 20:00-ն:

Հարգանքով՝

պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝
Մասնակիցների գրանցման բաժին
հեռ. 28-93-25